Քրդական սուբյեկտայնության քայքայումը. աշխարհաքաղաքական կերպափոխումները Մերձավոր Արևելքում

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 02.02.2026 թ.[1]

Անոտացիա

ԱՌՎԱԿ-ը վերլուծում է քրդական ինքնավար կազմավորումների կրիտիկական վիճակը Սիրիայում և Իրաքում՝ ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական առաջնահերթությունների փոփոխության և Թուրքիայի տարածաշրջանային ազդեցության ուժեղացման համատեքստում: Դիտարկվում է Սիրիայի Արաբական Հանրապետության ուժային և քաղաքական միասնականացման գործընթացը, որն ուղեկցվում է Սիրիայի ժողովրդավարական ուժերի ռազմական ներուժի վատթարացմամբ: Հատուկ ուշադրություն է դարձվում թուրք-ամերիկյան պայմանավորվածություններին, որոնց շրջանակներում քրդական գործոնը դառնում է Վաշինգտոնի հակահիրանական ռազմավարության գործիք: Հետազոտվում է տարածաշրջանային դերակատարների (Թուրքիայի, Իսրայելի, Իրանի և Ռուսաստանի) շահերի բախումը և քրդական սուբյեկտայնության գոյատևման հեռանկարները մերձավորարևելյան անվտանգության ճարտարապետության վերափոխման պայմաններում:

Բանալի բառեր. *Ռոժավա, Քրդստան, ՍԺՈՒ, աշխարհաքաղաքական գործարք, Թուրքիա, Սիրիա, ԱՄՆ, «Զարգացման ճանապարհ», IMEC, հակահիրանական ռազմավարություն, տարածաշրջանային անվտանգություն:*

1. Օպերատիվ իրավիճակը Ռոժավայում. խուսավարման տարածքի նեղացումը

Մերձավորարևելյան աղբյուրների համաձայն՝ Ռոժավայի ինքնահռչակ ինքնավար վարչակազմի շուրջ օպերատիվ իրավիճակը բնութագրվում է նրա պաշարների հետևողական արգելափակմամբ: Դա զգալիորեն նվազեցնում է Սիրիայի ժողովրդավարական ուժերի (ՍԺՈՒ) ջոկատների պաշտպանական ներուժը և սահմանափակում քաղաքական խուսավարման հնարավորությունները Ղամիշլիում գործող ղեկավարության համար: Դամասկոսի անցումային կառավարության ստորաբաժանումներն, ըստ էության, պաշարել են Ռոժավան՝ գրավելով Եփրատի աջ ափին գտնվող բոլոր հիմնական ռազմավարական դիրքերն ու օբյեկտները: Սիրիայի կառավարական զորքերի կողմից նախկինում գրավված Աֆրին, Սերեկանիե և Այն Իսա շրջաններից ներքին տեղահանված անձանց (շուրջ 150.000 մարդ) մեծ ներհոսքի պատճառով տարածաշրջանը կանգնել է մարդասիրական ճգնաժամի շեմին: Ներկայումս անվանականորեն գործում է հրադադարի ռեժիմը, որի շրջանակներում Դամասկոսն ու Ղամիշլին բանակցություններ են վարում սիրիական միասնական պետության կազմում Ռոժավայի վերաինտեգրման պայմանների շուրջ: Սակայն խոսքը, փաստորեն, Դամասկոսի կողմից ներկայացված վերջնագրի մասին է, որի պայմանները չկատարելու դեպքում կշարունակվի «*Նոր սիրիական բանակի*» հարձակումը դեպի քրդական տարածքների խորքը:

2. Նախկին համաձայնագրերի քայքայումը և արտաքին ճնշման գործոնը

Ռոժավայի ներկայացուցիչները հայտարարում են, որ Դամասկոսի ներկայիս պայմաններն արմատապես հակասում են 2025 թ. մարտյան պայմանավորվածություններին:

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 31.01.2026 թ.:

Օրինակ, կենտրոնական իշխանությունները հրաժարվում են քրդական զինված խմբավորումները, որոնք ձևավորված են 3 ազգային դիվիզիաների տեսքով, ներառել Սիրիայի միացյալ բանակի շարքերում՝ պնդելով, որ քուրդ մարտիկները կարող են երկրի զինված ուժերի մաս կազմել միայն «*անհատական կարգով*»: Այս պայմանն անընդունելի է քրդական կողմի համար, քանի որ հանգեցնում է մարտական ներուժի մասնատմանը և Ռոժավայում քրդական ուժերի փոխարինմանն այնպիսի ստորաբաժանումներով, որոնց կազմում առկա են ՀԹՇ-ի («Հայաթ Թահրիր աշ-Շամ») և ՍԺԲ-ի («Սիրիայի ժողովրդավարական ուժեր») արմատական խմբավորումների տարրեր:

Քուրդ վերլուծաբանների կարծիքով՝ դիվիզիաների ինտեգրման մոդելից հրաժարումը պայմանավորված է արտաքին ճնշումներով: Ենթադրվում է, որ խոսքը կարող է վերաբերել Թուրքիային, որը կարծում է, թե պետք է առավելապաշտական պահանջներ ներկայացնել անելանելի վիճակում հայտնված քրդերին: Բանակցային գործընթացին և ռազմական գործողություններին Թուրքիայի մասնակցությունը կասկած չի հարուցում: Քրդական աղբյուրները պնդում են, որ անհերքելի ապացույցներ կան հունվարի կեսերից Սիրիայի հյուսիսում և Արևելքում ՍԺՈՒ-ի դեմ սկսված ռազմագործողությանը թուրքական բանակի լայնածավալ մասնակցության մասին: Խոսքը սիրիական կառավարական ուժերին թուրքական բազմամակարդակ աջակցության մասին է, որը ներառում է հետախուզական տվյալների հավաքագրումն ու փոխանցումը, հրետանային կրակի ճշգրտումը և անօդաչու մարտական օդուժի օգտագործումը: Նշվում է նաև, որ թուրքական հատուկ ջոկատայինները մասնակցում են ՍԺՈՒ-ի հետ մարտական բախումների առավել բարդ հատվածներում իրականացվող գործողություններին:

3. Թուրք-ամերիկյան կոնսենսուսը և ՍԺՈՒ-ին աջակցելուց Վաշինգտոնի հրաժարումը

Անկարան դիտարկվում է որպես Սիրիայում քրդական ինքնավարության փաստացի վերացմանն ուղղված գործընթացների գլխավոր աշխարհաքաղաքական շահառու: Ռոժավայի շուրջ ստեղծված իրավիճակին հետևող փորձագիտական հանրությունը համակարծիք է, որ քրդերի դեմ «Նոր սիրիական բանակի» հունվարյան հարձակումը պետք է Վաշինգտոնի և Անկարայի միջև պայմանավորվածությունների արդյունք համարել, որոնց շրջանակներում ԱՄՆ-ը հրաժարվում է Ղամիշլիին աջակցելուց: Փոխարենը, հավանաբար, Թուրքիան պարտավորվել է ավելի բարեհաճ դիրքորոշում որդեգրել ԱՄՆ-ի հակաիրանական օրակարգի նկատմամբ և, հնարավոր է, աջակցել ԻԻՀ-ի վրա ճնշում գործադրելու քաղաքականությանը:

Վաշինգտոնը գրեթե բացահայտ կերպով քրդերին հաղորդում է իր պատրաստակամությունը՝ թույլ տալ Սիրիայի կազմում Ռոժավայի միասնականացման Դամասկոսի ծրագրերի իրականացմանը: Եփրատ գետի աջ ափին 17.01.2026 թ. տեղի

ունեցած մարտերի ամենաթեժ պահին, իրաքյան Էրբիլում բանակցություններ էին ընթանում Իրաքյան Քրդստանի նախկին ղեկավար Մասուդ Բարզանիի, ՍԺՈՒ ուժերի ղեկավար Մազլում Աբդիի և Թուրքիայում ԱՄՆ դեսպան Թոմ Բարաքի միջև: Բանակցությունների բովանդակությունը չի հրապարակվել, սակայն հունվարի վերջին հայտնի դարձավ, որ նշված հանդիպման ժամանակ ամերիկյան ներկայացուցիչը Մազլում Աբդիից պահանջել է համաձայնել Դամասկոսի վերջնագրին և, ըստ էության, հրաժարվել Ռոժավայի ինքնավարության պահպանման գաղափարից: Թոմ Բարաքը քուրդ առաջնորդներին ուղղակիորեն ասել է, որ Վաշինգտոնը հրաժարվում է Ռոժավային աջակցելուց, և եթե քրդերը շարունակեն դիմադրությունը, ԱՄՆ-ը չի կարողանա երաշխավորել, որ սիրիական բանակը զանգվածային հաշվեհարդար չի կազմակերպի ինքնահռչակ ինքնավարության քուրդ բնակչության նկատմամբ:

Հատկանշական է, որ դեսպան Թոմ Բարաքի՝ Դամասկոսին հանձնվելու կոչերի մասին տեղեկատվության ի հայտ գալուն զուգահեռ, միջազգային ԶԼՄ-ներում սկսեցին շրջանառվել հրապարակումներ առ այն, որ ԱՄՆ-ը երբեք Սիրիայի քրդերին անկախություն չի խոստացել և չի երաշխավորել նրանց պաշտպանությունը Դամասկոսի կենտրոնական կառավարության գործողություններից: Այդ նյութերում հստակ երևում է ամերիկա-քրդական դաշինքի իրավիճակային բնույթի մասին պատումը, որը ստեղծվել է բացառապես ԴԱՀԻՇ-ի դեմ համատեղ պայքարի նպատակով: ԶԼՄ-ներում ամրապնդվում է այն գաղափարը, որ Վաշինգտոնը որևէ պարտավորություն չի կրում ՍԺՈՒ-ի առջև՝ կանխելու Սիրիայի միասնականացումը, որն այժմ իրականացնում է «*Դամասկոսի օրինական իշխանությունը*»: Այս առնչությամբ Ռոժավայի ինքնավարության վերացման հարցը զուտ Սիրիայի ներքին գործն է, և այդ օրակարգին Վաշինգտոնի միջամտությունը ոտնձգություն կլիներ Սիրիայի Արաբական Հանրապետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության դեմ:

4. Անդրսահմանային ռիսկեր. Իրաքը և արմատական խմբավորումների գործոնը

Սիրիայի հյուսիս-արևելքում քրդական վարչակազմի և նրա զինված ուժերի կազմալուծման ներկայիս գործընթացը ձեռք է բերում ԱՄՆ-ի և Թուրքիայի միջև խոշոր աշխարհաքաղաքական գործարքի տարրի առանձնահատկություններ: Հարցը կայանում է նրանում, որ նման գործարքը կարող է շոշափել ոչ միայն Ռոժավայի, այլև Իրաքում քրդական վարչական կազմավորումների ճակատագիրը:

Քրդական աղբյուրների տեղեկատվությամբ՝ ներկայումս Թուրքիան ԴԱՀԻՇ-ի նախկին զինյալներին Սիրիայից ակտիվորեն տեղափոխում է իրաքյան Մոսուլ: Խոսքը 7.000 ծայրահեղականների մասին է, որոնցից միայն 1.500-ն են բնիկ իրաքցիներ: Ենթադրվում է, որ դրանք կարող են լինել կալանավայրերի բանտարկյալները, կալանավայրեր, որոնք ավելի վաղ վերահսկվում էին ՍԺՈՒ-ի կողմից և Ռոժավայի վրա

հունվարյան հարձակման ընթացքում անցել էին սիրիական կառավարական զորքերի ու թուրքական ուժերի ձեռքը: Քրդական ՀԼՄ-ները պնդում են, որ քրդական ինքնավարությանը սահմանակից շրջաններում ընդունելով և բնակեցնելով տվյալ մարդակազմին, Բաղդադի կենտրոնական իշխանությունները «*ռումբ են դնում, որը կրկին կպայթեցնի ողջ Իրաքը*»: Վաշինգտոնի կողմից արտաբերված արձագանքի բացակայությունը, որն ավելի վաղ հանդես էր գալիս որպես արմատական տարրերի մեկուսացման երաշխավոր ՍԺՈՒ-ի հետ համատեղ, թույլ է տալիս ԱՄՆ դիրքորոշումը մեկնաբանել որպես Անկարայի երկարաժամկետ ռազմավարության անուղղակի հավանություն: Խոսքը քրդական գործոնի համահարթեցման ծավալուն ծրագրի մասին է, որը դուրս է գալիս բուն սիրիական ուղղության շրջանակներից: Հավանաբար, Թուրքիան Բաղդադի հետ խորը համակարգում է զարգացնում՝ Դամասկոսի հետ փոխգործակցության նմանությամբ տարածաշրջանային մայրաքաղաքների համախմբված ճակատ ձևավորելով քրդական էթնոքաղաքական սուբյեկտայնության դեմ:

5. Ռուսաստանի և Իսրայելի դիրքերը փոփոխվող դիրքավորման մեջ

Այսպիսով, Սիրիայում և Իրաքում քրդական կազմավորումների համար կրիտիկական իրավիճակ է ստեղծվում: Մի կողմից՝ ԱՄՆ-ը հստակ հասկացնում է, որ այլևս մտադիր չէ ռազմաքաղաքական աջակցություն ցուցաբերել քրդական Ղամիշլիի, Էրբիլի, Սուլեյմանիի և եզդիական Սինջարի վարչակազմերին: Մյուս կողմից՝ չի նշմարվում մեկ այլ համարժեք արտաքին քաղաքական դերակատար, որի վրա հենվելով, քրդերը կարող էին շարունակել պահպանել ինքնուրույնության ուղեգիծը:

2025 թ. հունվարի վերջին հայտնի դարձավ, որ Ռոժավայում ռուսական հենակետերի զորակազմը շտապ տարհանվում է սիրիական Լաթաքիա, ինչը վկայում է, որ ՌԴ-ն չի ցանկանում ակտիվորեն ներգրավվել քրդական խնդիրների մեջ: Դա հաստատել է նաև Դամասկոսի ժամանակավոր կառավարության ղեկավար Ահմեդ աշ-Շարաայի այցը Մոսկվա 28.01.2026 թ.: Սիրիական ՀԼՄ-ների տեղեկություններով՝ փակ դռների հետևում աշ-Շարաայի հետ բանակցությունների ընթացքում ՌԴ նախագահ Վ. Պուտինը հաստատել է ՌԴ ԱԳ նախարար Ս. Լավրովի ավելի վաղ արած հայտարարությունն առ այն, որ Ռուսաստանն անվերապահորեն աջակցում է Սիրիայի Արաբական Հանրապետության միասնականացման Դամասկոսի ուղեգծին:

Առարկայական լինելու համար հարկ է նշել, որ նույնիսկ մեծ ցանկության դեպքում Ռուսաստանը չէր կարողանա ազդել քրդական հարցի շուրջ տեղի ունեցող իրադարձությունների ընթացքի վրա, քանի որ ստեղծված պայմաններում նրա համար առավելագույն խնդիրը սիրիական Տարտուսում, որտեղ գտնվում է Միջերկրական ծովում նրա միակ ռազմածովային կայանը, որոշ ժամանակ ամրապնդվելու հնարավորությունն է:

Քրդերին աջակցելու գործում ամերիկացիների հնարավոր այլընտրանք կարող էր լինել Իսրայելը, սակայն քրդական հարցի նկատմամբ գործնական հարթության վրա նրա քաղաքականությունն այնքան էլ չի տարբերվում ԱՄՆ-ի մոտեցումներից: Ռոժավայի վերջին իրադարձությունների վերաբերյալ իսրայելցի փորձագետների հնչեցրած կարծիքների դիտարկումը թույլ է տալիս եզրակացնել, որ Թել Ավիվում առնվազն զգուշավոր են վերաբերվում քրդական հարցում ամերիկացիների «*ձեռքերը լվանալու*» պահվածքին: Այնուամենայնիվ, Բ. Նեթանյահուի կառավարությունը, թիրախ ունենալով իրանական ընդհանուր օրակարգը, ստիպված է հետևել Դ. Թրամփի վարչակազմի գլոբալ ռազմավարության ուղուն, որի շրջանակներում քրդական խնդիրը մանրադրամ է դառնում: Բացի այդ, Իսրայելն անմիջական ռազմական ներկայություն չունի Քրդստանում, ինչը բացառում է քրդական ուղու վրա լրջորեն ինքնուրույն խաղալու հնարավորությունը:

Թել Ավիվը մտահոգված է, որ քրդական վարչակազմերի ինքնուրույնության ճնշումը կուժեղացնի Թուրքիայի դիրքերն արաբական աշխարհում և ընդհանրապես Մերձավոր Արևելքում: Անկարայի հետ հասունացող ռազմավարական մրցակցության համատեքստում դա հղի է Իսրայելի համար չափազանց անշահավետ տարածաշրջանային դիրքավորմամբ: Հաշվի առնելով Թուրքիայի կողմից Սաուդյան Արաբիայի հետ ձևավորվող դաշինքը և Բաղդադում Իրաքի կենտրոնական կառավարության հետ մերձեցումը, Ռ. Թ. Էրդողանի թիմի կողմից լոբբինգով իրականացվող «*Զարգացման ճանապարհ*» ծրագիրն սկսում է անհրաժեշտ պայմաններ ձեռք բերել գործնական իրականացման համար: Հիշեցնենք, որ խոսքը Հնդկական օվկիանոսից Իրաքով և Թուրքիայով Եվրոպա անդրազգային առևտրա-էներգետիկ երթուղու նախագծի մասին է, որը պետք է մրցակցի *IMEC*-ի համանման նախագծի հետ, իսկ վերջինս կոչված է Հնդկաստանն ու միջերկրածովյան երկրները կապել Հարավային երթուղով, որի գլխավոր հանգույցը հենց Իսրայելը պետք է դառնա: Իրաքում և Սիրիայում քրդական գործոնը խոչընդոտ էր համարվում «*Զարգացման ճանապարհ*» նախագծի իրականացման համար, և Թել Ավիվում ենթադրում էին, որ տարածաշրջանում ուժեղ և համեմատաբար ինքնաբավ քրդական սուբյեկտի առկայությունը կհանգեցներ թուրքական նախաձեռնության սառեցմանը: Այս կապակցությամբ տարածաշրջանում քրդական ռազմաքաղաքական սուբյեկտության ուժային վերացման ներկա պահին մեկնարկած գործընթացը, փաստորեն, վկայում է «*Զարգացման ճանապարհի*» իրականացման գլխավոր խոչընդոտներից մեկի վերացման մասին:

6. Հեռանկարներ և ռիսկեր. քրդական գործոնը որպես տարածաշրջանային հավասարակշռության օբյեկտ

Իսրայելում կարող են, ոչ առանց հիմքի, համարել, որ Անկարայի հետ գործարքի պատճառով Ռոժավային աջակցելուց Վաշինգտոնի հրաժարումը կզրոյացնի ապագայում «*քրդական խաղաքարտի*» խաղարկությանը դիմելու հնարավորությունը: Քրդերը

համարվում էին Մերձավոր Արևելքում Վաշինգտոնի և Թել Ավիվի հուսալի դաշնակիցները, որոնց օգնությամբ դաշնակից ամերիկա-իսրայելական երկյակը պայքարում էր տարածաշրջանի անցանկալի պետական վարչախմբերի և ծայրահեղական կազմակերպությունների դեմ, ազդեցություն նախագծում ներարաբական օրակարգի վրա, ճնշում գործադրում Թուրքիայի և Իրանի վրա:

Փաստորեն, Ռոժավայի հանձնումը, որը սպառնում է Իրաքում Քրդական ինքնավար վարչակազմերի և ռազմականացված կազմավորումների կազմալուծման հեռանկարով, կարող է հանգեցնել տարածաշրջանում ԱՄՆ-ի և Իսրայելի կարևոր դաշնակիցների կորստին, հետևաբար նաև Մերձավոր Արևելքում ուժերի և շահերի հավասարակշռությունը վերահսկելու անկարողությանը: Ակնհայտ է, որ Թել Ավիվում սկսել են գիտակցել, թե «*իրանական սպառնալիքի*» վրա Իսրայելի և ԱՄՆ-ի չափազանց մեծ կենտրոնացումը Թուրքիային հնարավորություն է տվել ամրապնդել իր դիրքերը տարածաշրջանում՝ համահարթեցնելով քրդական գործոնը: Հենց այդ պատճառով էլ իսրայելցի քաղաքական գործիչների և փորձագետների հայտարարություններում ավելի հաճախ են հնչում գնահատականներ առ այն, որ այլևս ոչ թե Իրանը, այլ Թուրքիան է գոյութենական վտանգ ներկայացնում հրեական պետության համար: Սակայն այդ գնահատականները հակասում են ԱՄՆ-ի գործողություններին. եթե Թել Ավիվում առարկայորեն ավելի շատ մտահոգված են տարածաշրջանային հավասարակշռության հեռանկարով, ապա Վաշինգտոնը գլխավորապես կենտրոնացած է իրանական գործոնի վերացման միջոցով Չինաստանին զսպելու գլոբալ ռազմավարության վրա: Եվ այս նախաձեռնության մեջ Թուրքիայի բարեհաճությունը նրա համար խիստ անհրաժեշտ է նույնիսկ տարածաշրջանում այնպիսի ավանդական դաշնակիցներին անտեսելու գնով, ինչպիսին քրդերն են:

Ներկա պահին քրդական քաղաքական-վարչական միավորումներն ու կուսակցությունները գտնվում են խաչմերուկում: Նրան կոնսոլիդացիան՝ Ռոժավային լայնածավալ ռազմական աջակցություն տրամադրելու նպատակով, կարող է դառնալ Սիրիայում էթնիկ զտումների պատրվակ և հանգեցնել Վաշինգտոնի հետ պահպանվող ձևական քաղաքական կապերի վերջնական խզմանը: Մյուս կողմից, Բարզանիի և Թալաբանիի քրդական կլանների, ինչպես նաև թուրքական բանտում գտնվող Աբդուլլահ Օջալանին դեռևս ենթարկվող ՔԲԿ (PKK) ռազմական կառույցների պասիվությունը մոտ ապագայում կարող է իրաքյան քրդական ինքնավարության վրա սիրիական ռազմաքաղաքական ճնշման նմանատիպ փորձի դրդել: Այդ մասին կարող է վկայել Մոսուլի և Սինջարի շրջաններ ԴԱՀԻՇ-ի զինյալների վերը նշված վերատեղակայումը: Դրա հետ մեկտեղ քրդերի համար չափազանց բարդ իրավիճակ է ստեղծվում Էրբիլին և Սուլեյմանիին սահմանակից իրանական Քրդստանում, որտեղ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը (ԻՀՊԿ) նոր ստորաբաժանումներ է

տեղափոխում տեղի քրդական՝ ՔԱԿԿ-ի («Քրդստանի ազատ կյանքի կուսակցության») դեմ պայքարելու համար, եթե այն ակտիվանա Իրանի վրա ամերիկյան հարձակման համապատկերում: Այս իրավիճակում քրդերը դադար են վերցրել և Ռոժավայում, Էրբիլում, Սուլեյմանիեում ու իրանական Սենենդեջում խմբակցությունների միջև ակտիվ շփումների ընթացքում ծայրահեղ ծանր իրավիճակից դուրս գալու հնարավորություններ են փնտրում: Մինչդեռ, որոշումներ կայացնելու համար ավելի ու ավելի քիչ ժամանակ է մնում: